Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ–ի աշխարհագրության (4 դասաժամ), մաթեմատիկայի (5 դասաժամ), պատմության (6 դասաժամ), ռուսաց լեզվի (21 դասաժամ), տեխնոլոգիայի (12 դասաժամ) , ուսուցչի թափուր տեղի համար :

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի : Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում՝ (Ձև 1),
2. մեկ լուսանկար (3 x4) չափի,
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ (դիպլոմ) ,
4. անձը հաստատող փաստաթուղթ,
5. §Հանրակրթության մասին ¦ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում /,
6. ինքնակենսագրություն (Ձև 5),
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ ,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք :

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 28-ը ներառյալ , ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00-ը , բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 30-ին , ժամը՝ 14.00 , ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոցում . հասցեն՝ քաղաք Էջմիածին Արագած զանգված 18։

Տեղեկությունների համար զանգահարել (77)85-31-10 հեռախոսահամարով :